Վարդապետներից շատերը նկատած են, որ առաւօտեան շարականի վերջին տաղի վերջին խօսքերը երգելու ժամանակ, տարօրինակ մի չընջոց գալիս խառնւում է երգին: Շատերը իրենց գլուխը վեր են բարձրացնում, նայում են շրջս կողմը եւ ոչինչ չեն նշմարում, ուրիշները զանազան բացատրութիւններ են տալիս. մտածում են, որ ծառերի խարշափն է, որ մէկը շարժել է սեղանի ետեւ դրուած ծնծղաները կամ դռան ետեւ երեւի բուրվառն են պատրաստում:

Այդ չէ: Հարցը վերջապէս նրանումն է, որ Հայը Ղեւոնդը այդ ժամին՝ չնայած որ բոլորովին աննիւթացած է, բայց տարօրինակ հակասութեամբ ոչ միայն պահում է ամբողջ իր դիմագիծը, այլ նաեւ իր սեւ, մի քիչ դունատած, վարդապետական զգեստը՝ թեւեր է առնում եւ զանգակատան կատարին հինգ անգամ չրջելուց յետոյ ճախրում է դէպի ծով եւ ուղղւում դէպի հայրենիք:

Եւ նա որ Հայոց աշխարհը երբեք տեսած չէր, հիմա ամէն օր այնտեղ է:

Ամէն օր:

Պատմում են, որ Սիսի չրջակայքում, մի հովիւ տարօրինակ մի երազ է ունեցել: Երազն էլ երազ չէր, որովհետեւ մարդը արթուն էր: Աղքատիկ հովիւ. հինգ ոչխար, երկու կով եւ մի շուն: Նստած էր բլուրի վրայ. ոչխարները հանդիստ արածում էին մօտակայ ձորի մօտ, կովերը ծոյլպէս. միայն շունը անհանդիստ ամէն կողմ է վազում, պոչը վեր բարձրացրած, կանգ առնում, նայում ու նորից վազվզում: Հովիւը վեր է կենում, շրջս կողմը նայում, ձեռքը ճակատին դնում դիտում եւ երբ կարծում է որ ոչինչ չկայ եւ ուզում է նստել, յանկարծ նկատում է, որ մօտակայ քարայրի առջեւ բուսնող համեստ թուփերը սկսում են շարժուել, քարերի վրայ տարօրինակ մի լոյս է ընկել, հով է եւ հով չէ:

Հովիւը աչքերը ճմռում է, ուշադրութիւնը լարում եւ ոտքի կանգնում: Յստակ կերպով տեսնում է, որ քարայրից դուրս է եկել ծերունի մի վարդապետ. նիհար, փոքրահասակ, ճերմակ մազեր, երկայն մօրուք, սեւ զգեստ, բայց ամբողջովին լուսաւորուած: Դէմքը մի քիչ դեղնած. մեծ աչքեր՝ դեղին հրապի նման վառուած:

Հովիւը նայում է ապշած. ձեռքերը բաց անում, կարծես մի բան պիտի գրկի: Ոչխարները դադարում են արածել եւ անվախ մօտենում են տեսիլքին: Կովերը գլուխը վեր են բարձրացնում, իսկ շունը խենթացած փախչում է:

— Հառայր ասսո՛ւրբ,— կակազում է հովիւը:

Ուզում է մօտենալ, աչքը համբուրել: Անկարելի բան: Լուսաւոր վարդապետը կամաց կամաց հեռանում է եւ այնտեղ, ուր նա ոտք է կոխել, փոքրիկ բոցեր են բարձրանում: Անկարող կանգ առնել, հովիւը, թեւերը միշտ բաց, առաջանում է տեսիլքի ետեւից: Ուզում է կանչել. ձայնը սառչում է բերանի մէջ: Ճակատի վրայից պաղ քրտինք է կաթում, ձեռքերը դողում են:

Քայլող լոյսի մօտ բոցավառ հով է վազում: Երկինքը աւելի պայծառ է քան երբեք: Թւում է նրան, որ ամէն ինչ աննիւթացել է, թեւ է առել: Ամէն ինչ սահում է, եւ ոչխարները, որ նոյնպէս դալիս են իր ետեւից, նայում են միամիտ եւ լուսաւոր աչքերով:

Այդպէս քայլում է երկար ժամանակ՝ չգիտէ ինչքան՝ մինչեւ որ առջեւը մի խորխորատ է տեսնում, ուր անկարելի է անցնել: Կանգ է առնում դողալով: Տեսիլքը կամաց բարձրանում է, սահում, յետ նայում, ժպտում ու անհետանում: Այդ ժպիտը իր կրծքին սեղմած, հովիւը երկար թափառում է, մինչեւ որ ճանապարհը գտնի եւ դիւղ է հասնում շատ ուշ:

Պատմում է:

— Բոչ-բոչ բաներ մի՛ ըսեր,— պատասխանում են դիւղացիները,— խակ պտուղ ես կերեր, սաթլճան ունիս, գնա պառկիր:

Բայց տեսիլքը ման է դալիս ամէն տեղ: Ամբողջ Հայաստանում: Նոյն օրը եւ դրեթէ նոյն ժամին նրան տեսնում են Խարբերդի վերի մասում, Վանից կէս ժամ հեռաւորութեան վրայ, Սիփանի կատարին, Էրզրումից Տրապիզոն տանող ճանապարհում, Զուարթնոցի աւերակների վրայ, Լեռնային Ղարաբաղում:

Դժուար է ժողովել բոլոր վկայութիւնները:

Հայ մատենագրության թուանշանային գրադարան